Արձանագրություն 2

Այրումի համայնքապետարանի կարիքների համար «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով գնանշման հարցման էլեկտրոնային ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

Ք. Այրում 21 հուլիսի 2020թ.Ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝

Անահիտ Ամիրաղյան - Առաջատար մասնագետ(ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Նարեկ Դանիելյան– Առաջատար մասնագետ (ԳԱ)

Անահիտ Հակոբյան – Առաջատար մասնագետ (ԲԱ)

Յուրա Հովհաննեսյան - Դեղձավան բնակավայրի վարչական ղեկավար (ԲԱ)

Դավիթ Վերանյան - Արճիս բնակավայրի վարչական ղեկավար (ԳԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Քոչարյան-Առաջատար մասնագետ

Օրակարգ

«ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

1. Արձանագրել «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները

2. Ուսումնասիրել «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներով կազմված լինելը:

3. Ուսումնասիրել «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերը և դրա՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելը

4. Ուսումնասիրել մասնակիցների առաջարկած գները

5. «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցին հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունում

6. Արձանագրել հայտի վերաբերյալ հարցերի և պատասխաններ, ներկայացված բողոքների, ինչպես նաև գնման գործընթացի շրջանակներում հակա օրինական գործողությունների մասին տեղեկությունների առկայությունը,դրանց մերժման վերաբերյալ որոշման կայացում

7. Որոշել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

1. «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

«ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Էլ. փոստ	ՀՎՀՀ
«ԱՁ Արթուր Բաբաջանյան»	ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, ք. Նոյեմբերյան Երևանյան 4	armaramayis@gmail.com	70420452
«Արտադրական Բազա» ԲԲԸ	Ք. Վանաձոր, Խնձորուտ 2	artadrakanbaza@mail.ru	06919717

2. «ՏՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/51» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացրած՝ հայտերի հրավերի պահանջներով կազմված լինելու մասին

2.1 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել է համակարգի միջոցով www.armeps.am ՀՀ Տավուշի մարզ Այրում համայնք, քաղաք Այրում, Աբովյան 1 հասցեում հուլիսի 21-ին, ժամը 11:00-ին: Ընդունել ի գիտություն, որ հայտերը՝ ոչ գնային պայմանների մասով կազմված են հրավերի պահանջներին համապատասխան: Մասնակիցներ՝ «ԱՁ Արթուր Բաբաջանյան»-ի, «Արտադրական Բազա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը ոչ գնային պայմանների մասով գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Մասնակիցների առաջարկած գների ուսումնասիրում

4.1 Հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացրած գնային առաջարկները.

Աշխատանքի անվանումը՝ «ՀՀ Տավուշի մարզի Այրում խոշորացված համայնքի հաշվեկշռում գտնվող անավարտ շենքի երկու հարկաբաժինները որպես

համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի լրակառուցման»				
Գնման հայտով ներկայացված գինը՝ 27755950 (քսան յոթ միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր հիսուն)				
Հ/Հ1	Մասնակցի անվանումը	Գնային առաջարկ ՀՀ դրամով		
		Արժեք /ինքնարժեք և կանխատեսվող շահույթի հանրագումարը /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	«ԱՁ Արթուր Բաբաջանյան»	19774500	3954900	23729400
2	«Արտադրական Բազա» ԲԲԸ	22854160	4570830	27424990

4.2 Հանձնաժողովը արձանագրեց, որ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված՝

- «ԱՁ Արթուր Բաբաջանյան»-ի գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և գնահատվում է բավարար:
- «Արտադրական Բազա» ԲԲԸ-ի գնային առաջարկում սխալ է հաշվարկված ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը: Մասնավորապես՝ մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 4570832 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված՝ 4570830 ՀՀ դրամի փոխարեն:

Որոշվեց՝

5. Համաձայն ՀՀ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Հիմք ընդունելով ՀՀ օրենսգրքի 60-րդ հոդվածը՝ «Արտադրական Բազա» ԲԲԸ-ի, ներկայացված հայտը գնային պայմանների մասով գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

6. Ղեկավարվելով <<Գնումների մասին օրենքի>> 38-րդհոդվածի 1-ին մասի ինչպես նաև 15-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթներով, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, բավարար գնահատված մասնակցին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների: Բանակցությունները տեղի կունենան 2020 թվականի հուլիսի 24-ին ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզ Այրում համայնք, քաղաք Այրում, Աբովյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ամիրաղյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ն. Դանիելյան

_____ Ա. Հակոբյան

_____ Յ. Հովհաննեսյան

_____ Դ. Վերանյան

Գնումները համակարգող ՝ _____ Լ.Քոչարյան